

փողն իրեն համար չէր : Կենաց սովորա-
կան գործոց մէջ ալ ոչ ոք իրեն կը պո-
ռար — Յաջ — Յահեակ — Յառաջ : Ի՞նչ ը-
նէր ուրեմն այն կենաց մէջ՝ զոր ինքը
պիտի կառավարէր, որուն յուզմունքը
պիտի կրէր : Ծոյլ անձանց համար այս-
չափ ուրեմն անուշ է հնազանդութիւ-
նը . ետքը սովորութիւնը հարկ կը դար-
ձնէ զայն :

Վերջապէս տարտամ փիճակէն ա-
զատելու համար Լուդուիկ մեծ որոշո-
ղութիւն մ'ըրաւ : Կարգուեցաւ . նոյն
կրող հնազանդութիւնն, որով երեւելի
եղեր էր բանակին մէջ, տանելով առ
ամուսինն . կարծես թէ երջանկութիւնը
կատարեալ ըլլալու համար՝ իր հին ըն-
կերակցին Մասսենայի պաշտպանու-
թեամբը Ֆէնէսդրէլլոյի բանտապան ալ
եղաւ . որով մէկի տեղ՝ երկու գլխաւոր
ունեցաւ, կինն ու բերդին հրամանա-
տարը :

Կինը քան զինքն երիտասարդ էր, ու
մեծղի կախուած վկոյն հանդերձ՝ հարս-
նութեան ժամանակը սիրուն աղջիկ
մը կը սեպուէր . բայց բնութեամբ վէս
ու կծծի էր, ու բռնադատեր էր զԼու-
դուիկ՝ որ 'ի բնէ անշահասէր էր, հա-
տուցմունք պահանջելու բանտարգեստ-
ներէն ամեն նիւթի համար որ իրեն
ձեռքն էր շնորհելը : Սակայն Լուդուիկ
այսու հանդերձ բաց 'ի մատակարարի
պաշտօնէն ամենեկին ընծայ չէր ընդու-
ներ . վասն զի այս պարագայն միայն
բանտին ներսը կրնար հանդիպիլ, ու
կնկանն աչքէն հեռու ըլլալով՝ կրնար
ուղածին պէս գործել . մէյմ'ալոր կարգն
աս էր :

Ուրեմն Լուդուիկի վրայ իրեք բա-
րակ զանազանութիւն կար, որ փոփո-
խակի կ'ազդէին վրան հրամանատարը,
կինն ու իր բնութիւնը : Դղեկին բարե-
կարգութեան կանոններուն նկատմամբ
անողորբելի էր . այս էր ահաւասիկ հրա-
մանատարին ազդեցութիւնը . ազահու-
թեամբ կը վարուէր բանտարգելոց հետ
կնկանն համար . իսկ ինքն իրմէ բարի,
զգայուն, վեհանձն ու կարեկցող էր,
երբ հրամանատարն ու կինը չէին փու-

թար սիրտը կարծրացնելու, կամ ա-
զահութեամբ լեցընելու :

Ասկէ աւելի ով որ կ'ուզէ Լուդուիկ
Բիզդիի կատարեալ նկարագիրն ունե-
նալ՝ զիտնայ որ քառասուն տարուան
էր, թխագոյն, մօրուքը թանձր, ուսերը
լայն, միջակահասակ ու կտրիճ : Երեա-
կայենք որ տարտամ քալուածքով մը
դղեկին դաւթէն կ'անցնի, սև ու կարճ
ծխանոց մը բերանը, ստէպ ստէպ գաղ-
ղիներէն՝ բրովանսալ խտլներէն ու գեր-
մաներէն երգմունքներ ընելով, թեթեւ
մ'աչքերն ամփոփելով՝ խորագիտի դէմք
առնել ուղած ժամանակը, ու դիւրաւ
մէկէն զուարթանալով՝ բարեգործու-
թեան մը յիշատակաւ, կամ իր պզտիկ
Անտոնիկին անունը լսելով . ու զիտցած
կ'ըլլանք ինչ որ ինքնին Շառնէ ալ կրը-
ցաւ գիտնալ, ու թերեւ պէտք եղածէն
ալ աւելի :

Կը շարունակուի :

ԱՌՁԵՌՆ

Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ԼԵԶՈՒԻ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի գլուխ երկրորդի տպագրութեան Առձեռն
Բառագրոց հայկազնեան լեզուիս՝ զայս ևեթ 'ի
հարկէն ասեմք, զի որ ինչ նշմարեալ էին ցարդ 'ի
մատենիդ ուղղելք՝ փոյթ յանձին կալաք կարեոր
քննութեամբ ուղղել . և որ ինչ անկան 'ի ձեռս
երկասիրութիւնք նախնեաց նորագիւտք, կամ
որ խուսափեալն էր յաջաց 'ի հինսն, յաւելաք
բառս աւելի քան զհինգ հազար, և ոճս բանից
բազումս : Զաւելին թողումք և նորանոր հետա-
զօտութեանց . իսկ այժմու որ և է մերոյ աշխա-
տութեանս ոչ այլ ինչ ինքրին փոխարէնք, բայց
զի ուսումն հայրենի բարբառոյս արծարծիցի սո-
վալ :